ՆՈՐ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ, ՀԻՄՆՎԱԾ ՀԻՆ ՀԱՎԱՏՔԻ ՎՐԱ

«Փարավոնը մոտեցավ, և Իսրայելի որդիները բարձրացրին իրենց աչքերն ու տեսան, որ եգիպտացիները գալիս էին իրենց ետևից: Իսրայելի որդիները շատ վախեցան և աղաղակեցին Տիրոջը: Եվ ասացին Մովսեսին. «Մի՞թե Եգիպտոսում գերեզմաններ չկային, որ մեզ բերեցիր անապատում մեռնելու. այս ի՞նչ արեցիր մեզ՝ դուրս հանելով Եգիպտոսից: Սա այն խոսքը չէ՞, որ ասում էինք քեզ Եգիպտոսում, թե՝ “Թո՛ւյլ տուր մեզ, որ ծառայենք եգիպտացիներին, որովհետև մեզ համար ավելի լավ է ծառայել եգիպտացիներին, քան թե մեռնել անապատում”»: Մովսեսն ասաց ժողովրդին. «Մի՛ վախեցեք, կանգնե՛ք ձեր տեղում և տեսե՛ք Տիրոջ փրկությունը, որ այսօր կանի ձեզ համար. որովհետև այսօր ձեր տեսած եգիպտացիներին այլևս հավիտյան չեք տեսնելու: Տերը պիտի պատերազմի ձեզ համար, իսկ դուք հանգի՛ստ եղեք»: Տերն ասաց Մովսեսին. «Ինչո՞ւ ես ինձ աղաղակում. ասա՛ Իսրայելի որդիներին, որ գնան: Իսկ դու բարձրացրո՛ւ գավազանդ, մեկնի՛ր ձեռքդ ծովի վրա, ճեղքի՛ր այն, և Իսրայելի որդիները ծովի միջով գնան ցամաքով: Եվ ես ահա պիտի կարծրացնեմ եգիպտացիների սիրտը, ու նրանք պիտի գնան սրանց ետևից. և ես պիտի փառավորվեմ փարավոնի, նրա բոլոր զորքերի, նրա կառքերի ու նրա ձիավորների առաջ: Եգիպտացիները կիմանան, որ ես եմ Տերը, երբ ես փառավորվեմ փարավոնի, նրա կառքերի և նրա ձիավորների առաջ»: Աստծու հրեշտակը, որ գնում էր Իսրայելի բանակի առջևից, ելավ ու գնաց նրանց ետևից. ամպի սյունն էլ ելավ նրանց առջևից և կանգնեց նրանց ետևում, եգիպտացիների բանակի և Իսրայելի բանակի մեջտեղը եկավ, և ամպ ու խավար եղավ մի կողմի համար, բայց մյուս կողմի համար գիշերը լույս էր տալիս: Եվ բանակներն ամբողջ գիշեր չմոտեցան միմյանց: Մովսեսը մեկնեց իր ձեռքը ծովի վրա: Տերն արևելյան սաստիկ քամիով ամբողջ գիշեր քշեց ծովը և ցամաքեցրեց այն, ու ջրերը ճեղքվեցին: Իսրայելի որդիները ծովի միջով ցամաքով գնացին: Ջրերը նրանց աջ և ձախ կողմերից պարիսպ դարձան:» Ելից 14:10-22

1. Գնալ առանց նպատակը իմանալու

«Հավատով Աբրահամը հնազանդվեց, երբ կանչվեց գնալու այն տեղը, որն իբրև ժառանգություն էր ստանալու: Նա ելավ գնաց՝ առանց իմանալու, թե ո՛ւր է գնում:» Եբրայեցիս 11:8

2. Շարժվել վախի ժամանակներում Աստծո ներկայության խոստումով

«Ահա պատվիրում եմ քեզ, զորացի՛ր և քա՛ջ եղիր, մի՛ վախեցիր և մի՛ զարհուրիր, որովհետև քո Տեր Աստվածը քեզ հետ է ամեն տեղ, ուր էլ որ գնաս:» Հեսու 1:9

3. Թողնել նավակը, վստահ լինելուց առաջ

«Հիսուսն իսկույն խոսեց նրանց հետ ու ասաց. «Քաջալերվե՛ք, ես եմ, մի՛ վախեցեք:» Մատթեոս 14:27

4. Հնազանդվել բժշկվելուց առաջ

«Հիսուսը նրան ասաց. «Վե՛ր կաց, վերցրո՛ւ մահիճդ և քայլի՛ր»: Եվ մարդն իսկույն առողջացավ, վերցրեց իր մահիճը ու քայլում էր:» Հովհաննես 5:8-9

«Եվ Հիսուսը հարյուրապետին ասաց. «Գնա՛ և ինչպես որ հավատացիր, այդպես էլ թող լինի քեզ»: Եվ այդ պահին նրա ծառան բժշկվեց:» Մատթեոս 8:13

Հաջորդ Քարոզի Թեման

«Ի՞նչպես Նախապատրաստվեմ Նոր Տարվա համար»

Հովիվ Սարօ Խաչիկեան